Միքայել Նալբանդյան

Առօրյա աշխարհ

Ի՛նչ ես գոռում, ի՛նչ խնդրում,
Դու անհագիստ հեղինակ .
Մեզ խաղալիք շինեցիր,
Ողջ աշխարհի խայտառակ:

Լաց ես լինում, հառաչում,
Գանգատդ անգամ հիմար է,
Թե աշխարհն յուր գործերով,
Բոլորովին փոխվել է:

Աշխատում ես մի կերպով
Խաղաղություն վրդովել,
Խլել մեր հանգիստ քունը,
Սրտերիս մեջ դող ձգել:

Չենք կամենում լսել քեզ
Թո՛ղ մեր ճաշն ուտենք հանգիստ,
Հետո խաղաղ քուն լինինք . . .
Հեռի՛ գնա մեզանից:

Մի՛ գոռար, մի՛ որոտար,
Մա՛րդ եղիր և դու մեր պես .
Վերացական խոսքերով

Մի՛ զար մյուս անգամ հանդես:

Մենք առօրյա բաների
Ծառայում ենք անդադար,
Դու ինչե՞ր ես մտածում,
Դրական է այս մեր դար:

Քո բարձր ճշմարտության
Ճառագայթները փայլուն,
Չեն տանելի մեր աչքին,
Ատելի են մեր հոգուն:

Ճանաչում ենք, հավատում,
Բայց չկամինք խոստովանել .
Պատճառ, նոքա շփոթում են
Մեր երջանիկ կյանքի թել:

Մենք կամինք կյանք վայելել .
Ուրեմն ի՛նչ հարկի համար,
Մեզ պի՛տո էր ծառայել
Ճշմարտության անպատճառ:
Մինչդեռ և առանց նորան,
Մինչ լոկ սուտի շնորհքով
Այս աշխարհի բարության
Մի մասը վայելելով,
Կարելի էր աստուծո
Փառավորել անունը .
Եվ չթուլանալու համար,
Եվ մարմինը պահելու,
Երբեմն մի փոքր զրկել . . .
Երբեմն մի փոքր գողանալ . . .

Չխռովելով մեր խիղճը,

Չաղմկելով մեր հոգին,
Տո՛ւր մեզ տաղեր, վեպ, առակ,
Հաճոյացիր մեր սրտին .

Թո՛ղ դատարկ բաներ լինին,
Մարդու վերք տալ չունենան,
Թեթև ու ծիծաղաշարժ,
Փորերս փույթ չէ թող շարժ գան:

Հանգստության միջոցին,
Մարսողության լավ ժամին
Դու դատավոր մի նստի՛ր
Խրատներով մեր գլխին:
Վշտաբեր ակնարկությունք,
Հեռի՛, նեղիչ գաղափարք,
Մի՛ լինիր դահիճ մոլության,
Որ չլինիս դահիճ մարդերին: